

Կոտայքի մարզպետը Չարենցավանում ներկա է գտնվել Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաների 9-րդ փառատոնի ամփոփիչ գալահամերգին

Հունիսի 15-ին Չարենցավանի Ա. Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում կայացավ Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների մարզային 9-րդ մրցույթ-փառատոնի գալահամերգը, որին ներկա էին Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն ու Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանը:

Գալահամերգի ընթացքում ելույթ ունեցան փառատոնի լավագույն մասնակիցները, իսկ երաժշտական դպրոցի նախասրահում բացված ցուցահանդեսում ներկայացված էին գեղարվեստի բաժնի սաների աշխատանքները:

Փառատոնի շրջանակներում կազմակերպվել են երաժշտարվեստի օրեր Չարենցավան, Աբովյան և Եղվարդ քաղաքներում, ինչպես նաև նկարչական բացօթյա պլեներ՝ Օհանավանքում:

Փառատոնը կազմակերպվել է Կոտայքի մարզպետարանի մշակութային միջոցառումների տարեկան ծրագրի համաձայն և հետապնդում է մի շարք նպատակներ՝

- Աջակցել մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության որակի բարձրացմանը
- Բացահայտել շնորհալի պատանի երաժիշտներին, նկարիչներին և արվեստի այլ ճյուղերի ներկայացուցիչներին
- Օժանդակել առավել շնորհալի պատանիների մասնակցությանը հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոններին:

Գալահամերգի ավարտին բոլոր հաղթողներն արժանացան պատվոգրերի և մրցանակների: